

– Փառք աստուծոյ, որդեակ,— պատասխանեց ծերը, եւ կը յիշէր այն օրն, որ չորս տարի առաջ դարձեալ այս աղջիկն առած կուրծքին վրայ՝ շողալով փոքրիկ լճակէ ազատեր էր: Եւ երկրորդ անգամն էր, որ աստուած այս հրեշտակին ազատութիւնը իրեն կը շնորհէր:

– Զիմա գիս կը փնտրե՞ն,— հարցուց աղջիկը:

– Դեռ քեզ փնտրելու ժամանակ չունին, որդեակ:

Եւ իրօք այնպէս էր, վասնզի այդ կատաղի ամբոխը, որ դռները սկսեր էր կոտորտել եւ ներս խուժել, հազիւ թէ ժամանակ թողէր էր այդ պալատին տեարց ծովին կողմէն փախչելու: Եւ զանկելինայ, զփիլակրիոս եւ զթումայ չի գտնելով՝ իւր կատաղութիւնը թափէր էր ամէն բանի վրայ, որ առջեւը կը տեսնէր: Այդ բոլոր բիւզանդական պերճանքը հարստութիւնը, կարասիքը խորտակեցան, աւար, կողոպուտ եղան խաժամուժին, եւ թէ որ զօրականաց խումբք չի հասնէին, տոմէր հիմն ի վեր կը տապալէր:

Իսկ Չաւեն խրիսուպոլիս երբ ելաւ սկսաւ մտածել թէ ի՞նչ պետք էր իւր սիրուն տղեկին. ուստի առանց աչքէն բաժնելու գնաց փոքրիկ անկողին մը եւ ուրիշ ինչ որ պետք էր առաւ եւ այդպէս գնաց մտաւ նաւոյ, որ Սեւ ծովու ափունքը քերելով պիտի երթար մինչեւ Տրապզոն: Ժամանակը ձմեռ էր. իր անձին համար չէր մտածեր զինուորը, բայց աչքը կը դարձնէր շարունակ այդ սիրելի աղջկան՝ որուն համար տունը, տեղը, իւր զաւկները ամէն բան թողէր թափառական ու պանդուխտ պտըտեր էր այնչափ ժամանակ, եւ հիմա գտնելով եւ այնպիսի հզօր ձեռքէ յափշտակելովն ինքզինք լիովին վարձատրեալ կը համարէր. միայն այն կը խնդրէր աստուծմէ. որ ինչպէս դիւրացուց իրեն այն օրը՝ դիւրացնէ եւ խեղճ որբին համար այդ ճանապարհորդութիւնն ի հայրենիս:

Իւր աղօթքն աստուած ընդունեց. Պոնտոսի ծովը իր սեւ կերպարանքը չի ցցուց սիրուն աղջկան. ձմեռուան յունուար ամիսը աշնան ցուրտ օրերուն պէս անցան եւ ճորոխի եգերքն ի վեր ճանապարհորդելով հասաւ Տայոց գաւառը, եւ հոն առաջին անգամ յայտնեց Արփենիի սեռը Բագրատունեաց Տիկնոջ, եւ զգեստները փոխելով եւ խումբ թիկնապահաց հետն առնելով՝ այնպէս Մամիկոնեանց Օրիորդը տարաւ Շիրակ Կամսարականաց դղեակը Երազգաւորս, իւր մօրեղբօր Սուրենի եղբօր՝ Ներսէի իշխանին յանձնեց:

Զայաստանի վիճակին վրայ դեռ չի խօսած՝ նոյն միջոցին Կոստանդնուպոլիս ինչ վիճակ որ ունեցաւ այն պատմենք համառօտիւ: